



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

*
* *

Եւ եկաւ զարուն, եւ անցաւ ամառ
բայց ես շտեսայ մի պայծառ արեւ,
Եւ կարկաչանու վտակը կայտառ
Հոկ արեան շիթեր ցայտեց իմ առջեւ:—

Եւ եկաւ թոշունն իմ հայրենի տան—
լարամայն ողջոյն առայ նորանից.
Այս, ողջով եկար, կոռոնկ սիրական,
Եւ անջառուեցար ողջով ինձանից:

Թօշնեցան ծաղկունքն իմ անոյշ երկրի,
Սառոյցը կապեց արիւնոտ վտակ.
Եւ պիտի ծաղկի կուրծքը սալերի,
Արդեօք կը տեսնեմ աղքարներն յստակ...

Երանի մէկ էլ աշքս քանայի,
Եւ դու իմ շէն տոնն, այժմ գերեզման,
Աւետաթերիդ ես ընդունէի,
Լսէի օրներգ քո վերածնովթեան:

ՍԱՐՆ Ի ՎԵՐ.

Դէսի վեր, դէսի վեր անվերջ է ուժիս.
Յոզնեցան քազուներս՝ այս կոռուսն անզօր,
Սպանեցաւ եւ վերջին ոյժն էլ ծնկներիս —
Դէսի վեր, սարն ի վեր, քաջասիրտ զինուոր:

*
* *

Ամիսի կարծրանան թող այս սեւ ժայռեց
Ամիսի թող սպառնաց անդունդն աճաւոր, —
Դեռ շունչ կայ ընթանումն շարժուումն ծեռ-
բեր —

Դէսի վեր, սարն ի վեր, ով արի զինուոր:

*
* *

Դեռ նեռու է կատարն անամպ ու յստակ,
Բայց եթէ շը հանենք այնտեղ մննք պսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է յաղթա-
նակ —

Դէսի վեր, սարն ի վեր, անվեհն ը զինուոր:
Յ. ՅՈՎԱՆՆՈԽԱՆ.

ՊԱՐԹԵԿՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՍՏԱՆՈՒՄ

Ե Ի

ՆՐԱՆՑ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՅ.

(250 Քրիստոսից առաջ — 226 Քրիստոսից յետոյ)

(Եարունակութիւն) *

«օր և որդու երկպառակութիւնը հաշտու-
թեամբ վերջացաւ. Որոգէսը Քահուրին իրեն գա-
հակից նշանակեց, այսու ամենայնիւ պարթեները
չոգուուեցան հոռվմայեցւոց տէրութեան նեղ վի-
ճակից, թէպէս և ներքին կոհեների ժամանակ
պարթեները օգնութեան էին համում թոյլ կու-
սակցութեանը, որպէս զի նա ոյժ ունենայ կոհեր
երկարացնելու, սակայն այդ օգնութիւնն էլ այն-
քան անշան էր, որ չէր կարողանում իւր նպատա-
կին հանել:

Եռապետութեան անդամների ներքին կոհւ-
ների ժամանակ էլ պարթեները չկարողացան հան-
գամանքից օգուտ քաղել, միայն 40 թուականին
Որոգէսը լսելով իրեն ապաստանած հոռվմայեցի
Քուինտուս Լարիենոս զօրավարին՝ մի մեծ բա-
նակ ուղարկեց նորա և Բակուրի առաջնորդու-
թեամբ գէպի Ասորիք, Պարթենական բանակը նուա-
ճեց ամբողջ Ասորիքը. Բարզափրան սատրապը
մուտք գործեց Պաղեստին և մեծ ուրախութեամբ
ընդունուեցաւ հրեաներից, որոնք գժգոհ էին Հե-
րովդէսի կառավարութիւնից, Բարզափրանը Երու-
սաղէմում թագաւորեցրեց Անտիգոնոսին, Բակուրը
իւր մեղմ կարավարութեամբ սիրելի դարձաւ
նուաճած երկրներում. Լարիենոսը յառաջ խա-
ղաց, տիրեց Կիլիկիային և Փոքր Ասիային, բայց
երբ 39 թ. Անտոնիոսի զօրավար Վիհանիիսուս
Բասուսը նրա գէմ ելաւ, ստիպուեցաւ յետ նա-
հանքել մինչև Տորոս ուր Բասուսը յաղթեց պար-
թեական բանակին, ցրուեց Լարիենոսի նոր ժողոված
լէգէոնները, Լարիենոսը փախաւ Կիլիկիա և բըռ-
նուելով գլխատուեցաւ. Մի երկրորդ Ճակատամար-
տում պարթեները կրկին յաղթուեցան և ստի-
պուեցան թողնել Ասորիքը և Պաղեստինը. Երրորդ
Ճակատամարտը պարթեների և Հռովմայեցւոց տեղի
ունեցաւ 38 թ. յունիսի 9-ին և վերջացաւ պար-
թեների կատարեալ պարտութեամբ, Բակուրը ըն-
կաւ այս Ճակատամարտի մէջ, Սրանից յետոյ Ասո-
րիքն ու Պաղեստինը կրկին ընկան Հռովմայեցւոց
իշխանութեան ներքոյ:

Որոգէսը իւր սիրելի որդու մահուամբ սաս-
տիկ ընկճուեցաւ, Բակուրի տեղը նա թագաւոր
կարգեց իւր երկրորդ որդի Ֆըլլաւիսիւս, որ իւր
եղբայրներին սպանել առւաւ և այդ բանի մասին
հօր գժգոհութիւնը լսելով, նրան էլ հրամայեց

* Տնս. „Արաբատ“ համար Ժ. եթ. 456